ՄԱՍ 10. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայություն

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԿՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ

## ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները

*(ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.1994թ. ու հավանության արժանացած ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից՝ 68/261 Բանաձև, 29.01.2014թ.)*

1. *նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն,*
2. *պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա,*
3. *հաշվետվություն և թափանցիկություն,*
4. *սխալ օգտագործման կանխում,*
5. *պաշտոնական վիճակագրության աղբյուրներ,*
6. *գաղտնիություն,*
7. *օրենսդրություն,*
8. *ազգային համակարգում,*
9. *միջազգային ստանդարտների օգտագործում,*
10. *միջազգային համագործակցություն*

## Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքները

*(ընդունված վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ.)*

1. *մասնագիտական անկախություն,*
2. *տվյալների հավաքագրման իրավասություն,*
3. *ռեսուրսների բավարարվածություն,*
4. *որակի ապահովման պարտավորություն,*
5. *վիճակագրական գաղտնիություն,*
6. *անաչառություն և օբյեկտիվություն,*
7. *մեթոդաբանության հիմնավորվածություն,*
8. *վիճակագրական գործընթացների հիմնավորվածություն,*
9. *ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն,*
10. *արդյունավետություն,*
11. *արդիականություն,*
12. *ճշգրտություն և հուսալիություն,*
13. *յուրաժամանակություն և ճշտապահություն,*
14. *փոխկապակցություն և համադրելիություն,*
15. *մատչելիություն և պարզություն:*

*«Եվրամիության և համագործակցության անդամ երկրների վիճակագրական մարմինների անկախության, ամբողջականության և հաշվետու լինելու մասին» հանձնաժողովի կոմունիկատը Եվրամիության Պառլամենտին և Խորհրդին, Բրյուսել, 25.05.2005*

## Պաշտոնական վիճակագրության դերը

- Կենտրոնացված պլանային տնտեսակարգի պայմաններում → Պետության հաշվետար → Եվ՛ վիճակագրական, և՛ վարչական տեղեկատվության մատակարար
- Ազատական տնտեսակարգի պայմաններում → Տեղեկատվություն մատակարարող ողջ հասարակությանը → Միայն վիճակագրական տեղեկատվության մատակարար (վարչական տեղեկատվության օգտագործող)

## Վիճակագրության յուրաժամանակության, որակի, ամբողջականության և օգտավետության համաձայնեցվածության բնութագիրը

| Ժամանակ / Յուրաժամանակություն | Որակ | Ամբողջա-կանություն | Օգտավետությունը[1] (կիրառական նշանակությունը) |
|---|---|---|---|
| *Քիչ* / *գերօպերատիվ* | *ցածր* | *թերի* | *զուտ միտումների մասով օպերատիվ վճիռների համար* |
| *Միջին* / *օպերատիվ* | *միջին* | *միջին* | *որոշումների համար* |
| *Երկար* / *պակաս արդիական* | *բարձր* | *լիակատար* | *վերլուծությունների համար* |

**[1]«Վիճակագրական տվյալները համաձայնեցված են կամ համատեղելի խելամիտ ժամանակահատվածում»՝ համաձայն «Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի» սկզբունք 14-րդի՝ Համաձայնեցվածություն և համադրելիություն (ընդունված 24.02.2005թ. Վիճակագրական ծրագրային կոմիտեի նիստի ժամանակ և հաստատված Եվրոպական Համայնքների հանձնաժողովի կողմից (Բրյուսել, 25.05.2005թ. COM(2005) 217)):**

### Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏՃՀԴ) կառուցվածքը ճյուղերի մակարդակով[1]

| Ճյուղի ծածկագիրը | Բովանդակություն |
|---|---|
| 10000 | Արդյունաբերություն |
| 20000 | Գյուղատնտեսություն |
| 30000 | Անտառային տնտեսություն |
| 40000 | Ձկնային տնտեսություն |
| 50000 | Տրանսպորտ և կապ |
| 60000 | Շինարարություն |
| 70000 | Առևտուր և հասարակական սնունդ |
| 80000 | Նյութատեխնիկական մատակարարում և իրացում |
| 81000 | Մթերումներ |
| 82000 | Լրատվա-հաշվողական սպասարկում |
| 83000 | Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ |
| 84000 | Շուկայի գործառումն առևտրային գործունեություն |
| 85000 | Երկրաբանություն և ընդերքի հետախուզում, գեոդեզիա և հիդրոօդերևութաբանական ծառայություն |
| 86000 | Բնակչության կենցաղային սպասարկման արտադրական ձևեր |
| 87000 | Նյութաարտադրական ոլորտի գործունեության այլ տեսակներ |
| 90000 | Բնակարանային-կոմունալ տնտեսություն |
| 90300 | Բնակչության կենցաղային սպասարկման ոչ արտադրական ձևեր |
| 91000 | Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն |
| 92000 | Կրթություն |
| 93000 | Մշակույթ և արվեստ |
| 95000 | Գիտություն և գիտական սպասարկում |
| 96000 | Վարկավորում, ֆինանսներ և ապահովագրություն |
| 97000 | Կառավարման մարմինների ապարատ |
| 98000 | Կուսակցական և հասարակական կազմակերպություններ |

[1] Կիրառվել է մինչև 2000թ. ներառյալ:

### Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի խմբ.1 (NACE 1) կառուցվածքը բաժինների մակարդակով[2]

| Բաժին | Բովանդակություն |
|---|---|
| A | Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն |
| B | Ձկնորսություն, ձկնաբուծություն |
| C | Հանքագործական արդյունաբերություն |
| D | Մշակող արդյունաբերություն |
| E | Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում |
| F | Շինարարություն |
| G | Առևտուր, ավտոմեքենաների կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում |
| H | Հյուրանոցներ և ռեստորաններ |
| I | Տրանսպորտ և կապ |
| J | Ֆինանսական գործունեություն |
| K | Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում |
| L | Պետական կառավարում |
| M | Կրթություն |
| N | Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում |
| O | Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում |
| P | Տնային տնտեսությունների վարման ծառայություններ |
| Q | Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն |

[2] Կիրառվել է 2001-2009թթ. ներառյալ:

### ԺՏՃՀԴ-ից NACE 1-ին անցման համեմատական սխեմա «Արդյունաբերություն» ճյուղի օրինակով




### ԺՏՃՀԴ-ի և NACE 1-ի համեմատական սխեմա «Բնակարանային-կոմունալ տնտեսություն» ճյուղի օրինակով




### NACE 1-ի և NACE 2[1]-ի հիմնական փոխկապվածությունը՝ բաժինների մակարդակով

| NACE 1 | | NACE 2 | |
|---|---|---|---|
| **Բաժին** | **Բովանդակություն** | **Բաժին** | **Բովանդակություն** |
| A | Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն | A | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն |
| B | Ձկնորսություն, ձկնաբուծություն | | |
| C | Հանքագործական արդյունաբերություն | B | Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում |
| D | Մշակող արդյունաբերություն | C | Մշակող արդյունաբերություն |
| E | Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում | D<br>E | Էլեկտրականության, գազի,գոլորշու և լավորակ օդի մատակարարում.<br>Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում |
| F | Շինարարություն | F | Շինարարություն |
| G | Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրա-տեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում | G | Մեծածախ և մանրածախ առևտուր. Ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում |
| H | Հյուրանոցներ և ռեստորաններ | I | Կացության և հանրային սննդի կազմակերպում |
| I | Տրանսպորտ և կապ | H<br>J | Փոխադրումներ և պահեստային տնտեսություն<br>Տեղեկատվություն և կապ |
| J | Ֆինանսական գործունեություն | K | Ֆինանսական և ապահովագրական գործունեություն |
| K | Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում | L<br>M<br>N | Անշարժ գույքի հետ կապված գործունեություն<br>Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն<br>Վարչարարական և օժանդակ գործունեություն |
| L | Պետական կառավարում | O | Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն |
| M | Կրթություն | P | Կրթություն |
| N | Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում | Q | Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում |
| O | Կոմունալ սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում | R<br>S | Մշակույթ, զվարճություններ և հանգիստ<br>Սպասարկման այլ ծառայություններ |
| P | Տնային տնտեսությունների վարման ծառայություններ | T | Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. Տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար |
| Q | Օտարերկրյա (էքստերիտորալ) կազմակերպությունների գործունեություն | U | Օտարերկրյա կազմակերպությունների և մարմինների գործունեություն |

[1] Կիրառության մեջ է սկսած 2010թ.-ից:

*Գծապատկեր.*
***Շրջակա միջավայրից տարաբնեռ հակվածությամբ մասնակիցներ***




## Վիճակագրական նպատակով տեղեկատվության հավաքագրման գործիքները

**1. Համատարած հաշվառումների գործիք.**

*1.1 մարդահամարներ,*
*1.2 գյուղատնտեսության համատարած հաշվառումներ,*
*1.3 տնտեսական համատարած հաշվառումներ:*

**2. Պարբերական հաշվառումների գործիք.**

*2.1 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր,*
*2.2 պետական մարմիններ,*
*2.3 տեղական ինքնակառավարման մարմիններ:*

**3. Ընտրանքային հաշվառումների գործիք.**

*3.1 ֆիզիկական անձինք (ներառյալ տնային տնտեսություններ),*
*3.2 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր,*
*3.3 պետական մարմիններ,*
*3.4 տեղական ինքնակառավարման մարմիններ:*

## Սկզբնական վիճակագրական տեղեկատվություն տրամադրողները (ռեսպոնդենտները)

1. *ֆիզիկական անձինք (ներառյալ տնային տնտեսություններ),*
2. *կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր,*
3. *պետական մարմիններ,*
4. *տեղական ինքնակառավարման մարմիններ:*

## Սկզբնական տեղեկատվություն ներկայացնողների (ռեսպոնդենտների) սկզբնական հաշվառման համակարգեր

**1.Ֆիզիկական անձինք.**

1.1 քաղաքացիաիրավական հարաբերությունները բնութագրող պաշտոնական փաստաթղթեր,
1.2 կամավոր և հայտցողական կարծիքներ, բանավոր պատասխաններ:

**2. Կազմակերպություններ.**

2.1 հաշվապահական հաշվառման փաստաթղթեր,
2.2 հարկային հաշվառման փաստաթղթեր,
2.3 մաքսային հաշվառման փաստաթղթեր,
2.4 քվազիֆիսկալ ոլորտի հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեգիստրներ,
2.5 գործառնական մշտադիտարկման, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր,

(շարունակություն)

**3. Պետական մարմիններ.**

3.1 պետական լիազորությունների շրջանակում ձևավորված վարչական ռեգիստրներ,

3.2 գործառնական մշտադիտարկման, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր:

**4. Տեղական ինքնակառավարման մարմիններ.**

4.1 տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում ձևավորված վարչական ռեգիստրներ,

4.2 գործառնական մշտադիտարկման, գործավարական, կազմակերպական և այլ փաստաթղթեր:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ* ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

- պաշտոնական վիճակագրությունը, որպես վիճակագրական տեղեկատվություն մատակարարող, իրավասու է օգտագործել և ձևափոխել վարչական ռեգիստրներից ստացված տեղեկատվությունը՝ վիճակագրական սահմանումներին և դասակարգիչներին դրանց համապատասխանությունն ու համադրելիությունը ապահովելու նպատակով,
- այդ եղանակով ստացված տվյալները չեն փոխանցվում սկզբնական տեղեկատվությունը տնօրինողին (վարչական ռեգիստրին) կամ տրամադրվում երրորդ անձանց վարչական նպատակներով օգտագործելու համար:

*Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Համաշխարհային բանկ, ECE-WORLDBANK/2003/W1/2, 11.08.2003*

***Տես՝ «Ի՞նչ է վարչական ռեգիստրը՛ փաստաթուղթը** http://www.armstat.am/file/doc/99465738.pdf :

## Վարչական ռեգիստրների ձևավորման և օգտագործման հետ կապված հիմնախնդիրներ

- սպառողները պետք է ընկալեն վիճակագրական տեղեկատվություն մատուցողներին, մասնավորապես՝ ազգային վիճակագրական ծառայություններին, որպես որոշակի քաղաքականության կողմնորոշված պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող կազմակերպություններ,
- վարչական և վիճակագրական նպատակների և դրանց միջև փոխադարձ կապերի բովանդակության հստակ սահմանում,
- վարչական և նմանօրինակ շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությանը չներքաշելու երաշխիքների ապահովում,

(շարունակություն)

- վիճակագրական նպատակներով վարչական տեղեկատվության անարգել օգտագործման ապահովում,
- արդի տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների հիման վրա վարչական տեղեկատվական աղբյուրների ընդլայնման խթանում,
- վարչական տեղեկատվության որակի բարելավում և մեթոդաբանության զարգացում,
- վիճակագրական նպատակներով վարչական աղբյուրների օգտագործման վիճակագրական մեթոդաբանության զարգացում և կատարելագործում:

*Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Համաշխարհային բանկ, ECE-WORLDBANK/2003/W1/2, 11.08.2003*

### Պաշտոնական վիճակագության տեղեկատվական աղբյուրները

- հետազոտություններ և հարցազրույցներ,
- վարչական ռեգիստրներ:

**Վարչական ռեգիստրների ինտեգրացված մոդելը**




# Ի՞նչ է վարչական ռեգիստրը

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հասարակության ներքին և արտաքին անվտանգության ապահովում
- Հասարակության յուրաքանչյուր անդամի կայուն զարգացման համար նախադրյալների ձևավորում
- Հասարակության այն անդամների նվազագույն կարիքների ապահովում, որոնք դեռ և/կամ արդեն   ի վիճակի չեն դրանք ինքնուրույնաբար հոգալու

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

- Վարչական լիազորությունների տիրապետող պետական մարմիններ (նախարարություններ, գերատեսչություններ և այլն)
- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Հանրային ծառայություններ մատուցող (ոչ վարչական բնույթի) պետական մարմիններ

### ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ) ԳՈՐԾԻՔՆԵՐ

- **Իրավունքների և պարտավորությունների գրանցում ու հաշվառում,**
- **Գործունեության արտոնումներ, թույլատրություն, արգելում և կանխարգելում,**
- **Խրախուսում ու խաթարում,**
- **Կարգավորում,**
- **Վերահսկողություն,**

## ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
(շարունակություն)

- Ստուգում, ստուգաճշտում, տեսչական զննում և դիտազննում,
- Վեճերի քննարկում ու լուծում,
- Պատժի և սահմանափակումների կիրառում,
- Արտոնություններ, փոխհատուցումներ և անհատույց օժանդակության տրամադրում,
- Այլ գործիքներ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- **Հասկացությունների և չափորոշիչների սահմանում**
- **Դասակարգումներ (կարգավիճակների, գործունեության տեսակների, արտադրանքի, վարչատարածքային և այլ միավորների)**
- **Կոդավորում (միասնական՝ նույնականացման հնարավորություններով)**
- **Անվանական հասցեական տեղեկատվություն (վարչական գործիքների կիրառման արդյունքում ձևավորված)**

## ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

**Վարչական ռեգիստրները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող անվանական՝ հասցեական տվյալների բազաներ (շտեմարաններ) են, որոնք հիմք են և հետևանք վարչական ներգործությունների համար:**

## ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- **Վարչական ռեգիստրները ձևավորող մարմիններ (իրենց վերապահված անվանական՝ հասցեական վարչական ներգործության լիազորության իրացում)**
- **Այլ վարչական լիազորությունների տիրապետող մարմիններ (նույնականացնելով այլ վարչական ռեգիստրների անհատական տվյալների հետ)**
- **Վիճակագրական մարմիններ (վիճակագրական բնույթի հանրային ծառայություններ մատուցելու համար)**
- **Գիտակրթական հաստատություններ և անհատ հետազոտողներ (գիտահետազոտական և կրթական ծառայություններ մատուցելու համար)**

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

- Պաշտոնական վիճակագրությունը, որպես վիճակագրական տեղեկատվություն մատակարարող, իրավասու է օգտագործել և ձևափոխել վարչական ռեգիստրներից ստացված տեղեկատվությունը՝ վիճակագրական սահմանումներին և դասակարգիչներին դրանց համապատասխանությունն ու համադրելիությունը ապահովելու նպատակով:
- Այդ եղանակով ստացված տվյալները չեն փոխանցվում սկզբնական տեղեկատվությունը տնօրինողին (վարչական ռեգիստրին) կամ տրամադրվում երրորդ անձանց վարչական նպատակներով օգտագործելու համար:

**Աղբյուրը՝** ***ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Համաշխարհային բանկ, ECE-WORLDBANK/2003/W1/2, 11.08.2003***

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍԻ ՕԲՅԵԿՏԻՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ*

****Մշակված է ըստ միջազգային գիտաժողովներում խնդրո առարկայի վերաբերյալ քննարկումների ամփոփումների, հաշվի առնելով պարոն Լարս Թիգենսենի (Դանիայի Վիճակագրություն)մեկնաբանությունները:***

## Նպատակը

- **Վստահության պակասի խնդիրը բնութագրական է մարդկային գործունեության բոլոր բնագավառներին: Այս առումով վիճակագրությունը բացառություն չէ:**
- **Սույն փաստաթղթի նպատակն է իրազեկել վիճակագրական տեղեկատվության սպառողներին պաշտոնական վիճակագրական արտադրողների անկախության անհրաժեշտության մասին: Դա Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի առաջին սկզբունքի էությունն է, որն ընդգծում է, որ ազգային վիճակագրական ծառայությունները չպետք է ծառայեն հատուկ քաղաքական կամ տնտեսական շահերին:**

## Պաշտոնական վիճակագրության նկատմամբ վստահության պակասի օբյեկտիվ պատճառներն են՝

1. Սպառողների տարբեր հեռանկարները,
2. Սպառողների տարաբնույթ շահերը,
3. Շահառուների վերաբերմունքը,
4. Մեթոդաբանության բազմաշերտությունը,
5. Պետական ինստիտուտների նկատմամբ վստահության ընդհանուր պակասը:

## 1. Սպառողների տարբեր հեռանկարները

**Վիճակագրական տեղեկատվությունը կարող է կոնֆլիկտ ունենալ սպառողի փորձի հետ: Վիճակագրական միջինը կարող է հաճախ շեղվել անհատական փորձից: Հետևաբար, *այնքանով, որքանով որ անհատներն ունեն տարբեր հեռանկարներ և ֆիզիկապես նույնական չեն,* վիճակագրության որակը կարող է տարբեր գնահատականների արժանանալ:**

**Տարբերությունը հեռանկարում կախված է սեռից, տարիքից, ազգությունից, կրոնից և այլն, ինչպես նաև, առավել անձնական բնութագրերից:**

## 2. Սպառողների տարաբնույթ շահերը

Վիճակագրական սպառողները պատկանում են հանրության տարբեր հատվածների և այդպիսով հանդիսանում են տարբեր քաղաքական, տնտեսական և այլ շահերի կրողներ: Հետևաբար նրանց սպասումները վիճակագրության նկատմամբ տարբեր են: Այսպիսով, վիճակագրությունն ընկալվում է որպես լավ լուր մեկ սպառողի համար, կարող է լինել վատ լուր մյուս սպառողի համար և ոչ տեղին՝ երրորդի համար:

## 3. Շահառուների վերաբերմունքը**

Պաշտոնական վիճակագրությունում շահառուների երեք խմբերն են՝ ռեսպոնդենտները, վիճակագրական տեղեկատվության սպառողները և հարկատուները: Նրանք ունեն տարաբեռ վերաբերմունք վիճակագրության նկատմամբ:

**Ռեսպոնդենտները** hակված են մտածելու, որ տեղեկատվություն տրամադրելը լրացուցիչ աշխատանքային ծանրաբեռնվածություն է:

**Վիճակագրական տեղեկատվության սպառողները** hակված են պահանջելու առավել շատ և մանրակրկիտ վիճակագրություն:

**Հարկատուները (պետական բյուջեն)** ունեն համոզմունք, որ այլ ծախսերն առավել հրատապ են և կարևոր, քան վիճակագրության համար ծախսերը: Պարադոքսն այն է, որ ցանկացած անձ միաժամանակ և՛ ռեսպոնդենտ է, և՛ վիճակագրական տեղեկատվության սպառող, և՛ հարկատու: Հետևաբար, նրա վերաբերմունքը վիճակագրության նկատմամբ կախված է նրանից, թե շփման պահին այդ երեք դերակատարումներից որով է նա հանդես գալիս:

** **Տե՛ս** ***հաջորդ պապկերը:***

## 4. Մեթոդաբանության բազմաշերտությունը

- Վիճակագրությունը շատ հաճախ օգտագործվել է ապակողմնորոշելու մարդկանց, և առկա են ոչ գիտական ու սխալ վիճակագրական մեթոդաբանության օրինակներ, որոնք միտումնաբար օգտագործվել են հարմարեցնելու հատուկ քաղաքական, տնտեսական կամ այլ շահերին:

  Դա հաղթահարելու նպատակով միջազգային հանրությունը համաձայնվել է ստանդարտների և մեթոդաբանությունների շուրջ՝ սկսած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի ձևավորումից՝ 1947թ.-ին:

- Հիմնավորապես վիճակագրական մեթոդաբանությունը բաղկացած է 6 տարրերից՝
  - **Տեսական շերտ**
    - Սահմանումներ,
    - Դասակարգումներ
    - Մաթեմատիկական տեսություն և մոդելներ,
  - **Գործնական շերտ**
    - Տվյալների աղբյուրներ, այսինքն հետազոտություններ և վարչական ռեգիստրներ
    - Տվյալների հավաքագրման, մշակման գործիքակազմ,
    - Տարածման քաղաքականություն, ներառյալ հրապարակման օրացույցը և վերանայման քաղաքականությունը:

Որպեսզի վիճակագրությունը վստահելի լինի, մեթոդաբանությունները և քաղաքականությունները պետք է լինեն թափանցիկ, այսինքն փաստաթղթավորված և հրապարակված բոլորի համար՝ տեսնելու և հարցումներ կատարելու:

# 4. Մեթոդաբանության բազմաշերտությունը *(շարունակություն)*

Վերոհիշյալ տարրերից յուրաքանչյուրն էլ պարունակում է գիտական աբստրահում, ինչն էլ վստահության պակասուրդի պատճառներից է հանդիսանում:

Դրանցից առավել ակնառուն վերագրվում է ընտրանքին՝ շատ սպառողներ չեն հասկանում լավ մշակված ներկայացուցչական ընտրանքների ուժը, բայց հակված են միայն հավատալու միկրոմակարդակի տվյալներին:

Մյուս կարևոր պատճառը վերաբերում է վիճակագրության յուրաժամանակության, որակի, ամբողջականության և օգտավետության միջև առկա կոնֆլիկտին (Տե՛ս *հաջորդ* պատկերը):

Բարձր որակի վիճակագրությունն ամբողջական տվյալներով, որն ապահովում է ցուցանիշի օգտավետությունը, պահանջում է երկարատև աշխատանք, ինչն էլ այն դարձնում է պակաս արդիական, ի համեմատություն թերի ամբողջականությամբ գերյուրաժամանակ շտապ հավաքագրված տվյալներով ամփոփված ցուցանիշի:

## 4. Մեթոդաբանության բազմաշերտությունը *(շարունակություն)*

Վստահության պակասի համար այլ, բայց ոչ պակաս կարևորություն ունեցող պատճառներից են դասակարգումները և տեղեկատվության աղբյուրները:

**Տարբեր մակարդակները դասակարգումների** շրջանակում օգտագործվում են, որպեսզի ընդգծեն տվյալների որակը և օբյեկտի յուրահատկությունները վիճակագրության համար: Դա կարող է առաջացնել անհասկացություն, երբ սպառողները համեմատում են այլ տվյալների հետ կամ փորձում են ստանալ որոշակի եզրահանգումներ վիճակագրությունից:

**Տվյալների աղբյուրները** հաճախ լիակատար չեն և ոչ ամբողջովին են համապատասխանում միջազգային վիճակագրական ստանդարտների և մեթոդաբանությունների պահանջներին: Վարչական ռեգիստրները հանդիսանալով տեղեկատվության կարևորագույն աղբյուրներից մեկը երբեմն ոչ միայն ամբողջական չեն, այլև վարչական տեղեկությունները կարող են կարիք ունենալ վերափոխվելու, համաձայն թափանցիկ, լավ փաստաթղթավորված մեթոդների, որպեսզի դառնան կիրառելի վիճակագրական փոփոխականներ:

## 5. Պետական ինստիտուտների նկատմամբ վստահության ընդհանուր պակասը

Քաղաքակրթության ողջ պատմության մեջ, ցավոք, գերիշխում է պետական ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության ցածր չափաբաժինը: Հետևաբար, ողջ աշխարհում ազգային վիճակագրական ծառայություններն ավել կամ պակաս չափով տառապում են հանրության վստահության պակասից: Դա նաև վերաբերում է Եվրամիության և Տնտեսական զարգացման ու համագործակցության կազմակերպության անդամ երկրների վիճակագրությանը: Չնայած այն հանգամանքին, որ ազգային վիճակագրական ծառայությունները հիմնվել են, ընդհանուր առմամբ, համաձայն հանրությանը ծառայելուն ուղղված սկզբունքներին, միևնույն է դրանք դիտվում են որպես մենաշնորհներ՝ առանց այլընտրանքի կամ հանրության համար համեմատելու նպատակով մրցակցող տեղեկատվության: